

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Կիրակի, 1 Ապրիլ. Ծաղկազար: Առաւօտեան ժամը 6:30-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային և Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ, ապա մատուցեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազազեան, քարոզեց՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց և արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղալտոց և Ասորւոց թափօրները:

Վանք վերադարձին, հայոց թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը և զբաղիւնները «Որ զխորհուրդ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց և քարոզեց Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք վանքի շրջափակէն ներս կատարուեցաւ թափօր:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնբասէք»-ի արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Վարագոյրներու բացման մասնակցող բարեպաշտ հաւատացեալներուն անունները կարդաց Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Կատարուեցաւ հանգանակութիւն՝ Ազգային բուժարանին ի նպաստ:

Երեքշաբթի, 3 Ապրիլ. Աւագ երեքշաբթի: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր լեհահայոց առաջնորդ Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան: Ըստ սովորութեան Սբ. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան, որ թափօրի իւրաքանչիւր հանգրուանին բացատրութիւններ կու տար ուխտաւոր հա-

ւատացեալներուն:

Հինգշաբթի, 5 Ապրիլ. Աւագ Հինգշաբթի (Յիշատակ վերջին ընթերցաց): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան ճառը՝ գերազանցօրէն վեհ և շինիչ խրատներով լեցուն:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Ունիւլուայի» սրտագրաւ կարգը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ներկայ էին օտար բարձրաստիճան հիւրեր, որոնց կարգին Անկլիքան եպիսկոպոսը, որ վերջաւորութեան շուրջառով և ջաթալթագ ի գլուխ բարձրացաւ Աւագ խորան և Աւետարանէն հատուած մը կարդած Անգլերէնով:

Ժամը 5-ին, փոքր թափօր մը գլխաւորութեամբ Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեանի այցելեց Քրիստոսի զոյգ բանտերը: Ս. Ծառին առջեւ Աւետարանի ընթերցումէն ետք քարոզեց վանուց բակը լեցնող ժողովուրդին՝ խօսելով Յիսուսի մատնութեան, դատաւարութեան և Պետրոսի ուրացման դէպքերու մասին, ինչպէս նաեւ տուաւ վանքին պատմականը, ապա թափօրը մեկնեց Ս. Փրկիչ (Բ. բանտ Քրիստոսի), ուր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

Գիշերուան ժամը 7-էն 12, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»:
«Փառք ի բարձունս»-էն ետք Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ «Յայսմաւուրքի Ամպիոնէն» քարոզեց Կ. Պոլիսէն ուխտաւորաբար ժամանած Տ. Զաքէոս Ծ. Վրդ. Օհանեան:

Ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց և կատարեց «Խաչի քո Քրիստոս»-ի խնկարկութիւնը:

Ուրբաթ, 6 Ապրիլ. Աւագ Ուրբաթ (Յիշատակ Զարչարանաց Խաչելութեան և Թաղման Տեառն): Կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան

մէջ կատարուեցաւ «Կարգ խաչելութեան»։ Հանդիսապետն էր ուխտաւորաբար Ս. Երկիր եկած Ուկրանիոյ Թեմի Առաջնորդ Տ. Մարկոս Եպս. Յովհաննիսեան։

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը։ Հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը։

Շաբաթ, 7 Ապրիլ. Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Զատիկ)։ Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Աւագ Թարգման Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի ձեռքէն։

Ժամը 11-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, Հ.Ն.Մ-ի և Հ.Մ.Ը.Մ-ի սկառտներով և նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութիւն, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դռան կնքումէն։ Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեան, Յունաց Ամեն. Տ. Թէոֆիլոս Պատրիարքին հետ, մտաւ Ս. Գերեզման, ուրիշ հինգ վայրկեան յետոյ դուռն տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամաստան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Լուսարարապետ Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած խուռներամ բազմութիւնը ամենագգի ուխտաւորներուն։ Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր։ Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեալ» շարականը։ Լուսահան հայր սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը։

Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց և Ասորոց թափօրները։

Վանք դարձին, դարձեալ սկառտներու նուագախումբով առաջնորդուած, թափօր կազմուեցաւ, լուսահան՝ Տ. Ասպետ Վրդ. Պալեան շուրջառագգեստ և ապակէ պահպանակի մէջ Ս. Գերեզմանէն լոյսը ի ձեռին թափօրին մէջտեղէն քալելով։ Դաւթի Բերդին մօտ Լուսարարապետ Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան։ Շարականներ երգելով և զանգահարութեամբ մուտք գործեցին Մայր Տաճար։

Լուսարարապետ Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատիկական Աւետարանը և Պահպանիչով արձակեց ժողո-

վուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»։

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւնը Մայր Տաճարին մէջ։ Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Ալոյեան։ Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Նախատօնակ։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը։ Ապա, Միաբանութիւնը և դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւն։

Կիրակի, 8 Ապրիլ. Զատիկ Յարութեան Տեառն։ Կէս գիշերէն ետք ժամը 2:45-ին Մայրավանքի մեծ զանգը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար։

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամաստան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»։ Ապա միաբան հայրեր և ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իջան Սուրբ Գերեզմանի շուրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռադարձ թափօրով Գերեզմանի և Պատանատեղւոյն շուրջ։ Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց և Ասորոց թափօրները։ Կատարուեցաւ «Անդաստան», իսկ Ս. Գերեզմանին առջեւ «Ժաշի քո Քրիստոս» բաժինի երգեցողութիւնը։

Առաւօտեան ժամը 7-ին Լուսարարապետ Սրբազան Հայրը Միաբան Հայրերու հետ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, և կարճ դադարէ ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան Տ. Եփրեմ Արք. Թապաքեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և քարոզեց, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ։

Վանք դարձին հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեալ» շարականը երգելով Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան։

Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատիկական մեծահանդէս «Անդաստան»-ին։

Երկուշաբթի, 9 Ապրիլ. Բ. օր Ս. Զատիկ։ Յիշատակ մեռելոց։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատոյց և քարոզեց ուխտաւորաբար Ս.

Երկիր եկած Ուբրանիոյ Թեմի Առաջնորդ Տ. Մարկոս Եպս. Յովհաննիսեան: Ս. Պատարագի վերջաւորութեան Պատրիարք Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նաեւ Միաբան Հայրեր մասունքներով, դարձան եռագարձ թափօր, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ» ուխտաւորաց բարի ճանապարհ մաղթելու համար: Ապա Միաբանութիւնը և ժողովուրդը «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազանը բոլորին բաժնեց նշխար:

Երեքշաբթի, 10 Ապրիլ.- Գ. օր Ս. Զատիկ: Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ:

Շաբաթ, 14 Ապրիլ.- Յիշատակ գլխատման Սրբոյն Յովհաննիս Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 15 Ապրիլ.- Նոր Կիրակէ (Կրկնազատիկ): Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց լուսահան Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

Հինգշաբթի, 19 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ուրբաթ, 20 Ապրիլ.- Աւետումն Ս. Աստուածածնի: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ և «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Տ. Քարոզեց Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեան:

Շաբաթ, 21 Ապրիլ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան

ժամերգութիւնն ու նախատօնակը, մեր վերնամաստան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս:

Կիրակի, 22 Ապրիլ.- Աշխարհամատան (Կանաչ Կիրակէ): Գիշերային և Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամաստան մէջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց և քարոզեց Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Ս. Պատարագի վերջաւորութեան պատարագիչ Հայր Սուրբը նախագահեց Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին:

Երեքշաբթի, 24 Ապրիլ.- Յիշատակ Սրբոց Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթաց Հայոց Յեղասպանութեան վասն հաւատոյ և հայրենեաց: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշեան:

Շաբաթ, 28 Ապրիլ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 29 Ապրիլ.- Կարմիր Կիրակէ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամաստան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 5 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Կիրակի, 6 Մայիս.- Տօն Երեւման Ս. Խաչին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդնուպոլսի, և հանդիսապետեց «Անդաստանի»-ի արարողութեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որուն վերելը զետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Պատարագեց և քարոզեց Տ. Տիրան Աբղ. Յակոբեան:

Շաբաթ, 12 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեան:

Կիրակի, 13 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Չորեքշաբթի, 16 Մայիս.- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր Բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ կառուցուած վրանամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ:

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»-ի և Հսկման կարգերը և ապա Գիշերային և Առաւօտեան ժամերգութիւնները:

Հինգշաբթի, 17 Մայիս.- Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտուն Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, և Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագը: Պատարագեց և քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»: Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուեցաւ «Անդաստան»:

Շաբաթ, 19 Մայիս.- Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Երեկոյեան ժամերգութիւնը և նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 20 Մայիս.- Երկրորդ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Շաբաթ, 26 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գեորգ Աբղ. Հայրապետեան:

Հոգեգալստեան նախատօնակին ի Ս.

Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»-ի և Հսկման կարգերուն նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 27 Մայիս.- Հոգեգալուստ: Առաւօտեան ժամերգութեան աւարտին հանդիսապետութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ «Անդաստան» ի Ս. Յակոբ: Ապա Միաբանութիւնը Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Փրկիչ և «Հրաշափառ»-ով մուտք գործեց մատուռէն ներս, ուր և մատուցուեցաւ օրուան Ս. Պատարագը: Ժամարարն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որ Պատարագի ընթացքին կարգաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը: «Հայր մեր»-էն առաջ նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց և միաբանից հոգիներուն ի հանգիստ:

Կէսօրէ ետք, Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր մեկնեցան Սիոն լեռ, այցելեցին վերջին ընթրեաց վերնատունը: Օրուան դէպքին պատմական վայրը կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն:

Շաբաթ, 2 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Կիրակի, 3 Յունիս.- Յիշատակ եղիայի մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ներսէճ Աբղ. Ալոյեան:

Կէսօրէ ետք, նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 4 Յունիս.- Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեան:

Ուրբաթ, 8 Յունիս.- Նախատօնակին ի Ս.

Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 9 Յունիս.- Ս. Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն ի վիրապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին աւանդատան Ս. Գրիգոր Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Նոյն օրը երեկոյեան, Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը, ապա «Տէր ողորմեա» երգուեցաւ ծնրադիր:

Կիրակի, 10 Յունիս.- Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Էջմիածնի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Նոր Երուսաղէմի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան: Քարոզեց և «Հայրապետական մաղթանք»-ին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շաբաթ, 16 Յունիս.- Ս. Մեծին Ներսիսի և Խաղայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիրակի, 17 Յունիս.- Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Դեոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ուրբաթ, 22 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 23 Յունիս.- Գիւտ Նշխարաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աղան Արք. Գոգչեան:


Կիրակի, 24 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ քաղաքիս արեւմտեան բաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Ժամարարն էր Տ. Տիրան Արք. Յակոբեան:

Չորեքշաբթի, 27 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Հինգշաբթի, 28 Յունիս.- Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ և Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց և քարոզեց Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Շաբաթ, 30 Յունիս.- Սրբոցն Տրդատայ Թագաւորին և Աշխէն Տիկնոջն և Խոսրովիդըխտոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Նոյն օրը երեկոյեան, Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Երկուշաբթի, 2 Ապրիլ.- Երուսաղեմի Հին քաղաքի ոստիկանապետ՝ Պրն. Տորոն Թուրճուման իր ոստիկաններով այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցավ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Աւագ Շաբթուան Լոյսի արարողութեան հետ առնչուած հարցեր:

Երեքշաբթի, 3 Ապրիլ.- Առաւօտեան ժամը 11:30-էն սկսեալ, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի Զատկական շնորհաւորութեան գնաց Ֆրանչիսկեան Քիւսթոտին և Լատինաց Ամենապատիւ Պատրիարքին և Միաբանութեան:

Նոյն օրը երեկոյեան Զատկական տօներու առիթով Լեհաստանէն և Հայաստանէն Երուսաղեմ ժամանած ուխտաւորներ՝ առաջնորդութեամբ Տ. Տաճատ Վարդապետ Ծատուրեանի և Տ. Գրիգոր Քահանայ Գրիգորեանի, այցելեցին Պատրիարքարան և ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, Կ. Պոլիսէն Տ. Յարութիւն Աբեղայ Տամատեան և Սեւան Սարկաւագ Արաբօղլու 25 ուխտաւորներով այցելեցին Պատրիարքարան և ստացան Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

Չորեքշաբթի, 4 Ապրիլ.- Երեկոյեան ժամը 6-ին, Զատկական տօներու առիթով Գալիֆորնիայէն Երուսաղեմ ժամանած ուխտաւորներ, առաջնորդութեամբ Արժանապատիւ Տ. Մուշեղ Աւագ Քահանայ Թաշճեանի այցելեցին Պատրիարքարան և ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Ուրբաթ, 6 Ապրիլ.- Երեկոյեան ժամը 7-ին, Ուբրանիոյ Թեմի Առաջնորդ՝ Տ. Մարկոս Եպս. Յովհաննիսեան, ընկերանալով Զատկական տօներու առիթով Կ. Պոլիսէն Ս. Երկիր ժամանած Տ. Զաքէոս Ծ. Վրդ. Օհանեանի, Տ. Յարութիւն Աբղ. Տամատեանի, Սահակեան երգչախումբի անդամներուն և Տնօրէն Խորհուրդի ներկայացուցիչներուն, միասնաբար այցելեցին Պատրիարքարան և ստացան Սուրբ Աթոռոյս

Գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը: Հանդիպման ընթացքին Սահակեան երգչախումբ Սեւան Ակօշեանի ղեկավարութեամբ կատարեցին շարականներ և ապա Պատրիարք Սրբազան Հօր յանձնեցին յիշատակի նուէր մը:

Չորեքշաբթի, 11 Ապրիլ.- Ս. Յարութեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ, յաջորդաբար Պատրիարքարան Զատկուայ շնորհաւորանքի եկան Լատինաց Պատրիարքական Փոխանորդը՝ իր միաբաններով, և Կաթոլիկ, Բողոքական, Հապէշ, Ղպտի և Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր և ներկայացուցիչներ:

Ժամը 11:30-ին, Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր և Միաբանութեան շնորհաւորելու եկաւ նաեւ Ֆրանչիսկեան Փոխ-Քիւսթոտը՝ իր միաբաններով:

Ուրբաթ, 27 Ապրիլ.- Երեկոյեան ժամը 7:30-ին, նախագահութեամբ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր, ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ «Գերմանական Զայն ընդդէմ անարդարութեան. Յոհաննէս Լեփսիուս և Հայոց Յեղասպանութիւնը» խորագիրը կրող դասախօսութիւն մը, որ կարելի դարձաւ Պատրիարքութեանս և Սուրբ Երկրի Լութերական Եկեղեցւոյ համագործակցութեան շնորհիւ: Բանախօսն էր՝ Գերմանիոյ մէջ գտնուող Յոհաննէս Լեփսիուսի տուն-թանգարանի տնօրէն՝ Դոկտ. Ռօլֆ Հոսֆիլտ:

Երկուշաբթի, 30 Ապրիլ.- Առաւօտեան ժամը 9:30-ին, Պատրիարքարան այցելեց և Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Սուրբ Երկրի Պապական Նուիրակը:

Շաբաթ, 19 Մայիս.- Առաւօտեան ժամը 10:00-ին, Հայաստանէն Տ. Ժիրայր Քահանայ Խաչատրեան ընկերակցութեամբ՝ Տ. Մուշէ Քահանայ Վահանեանի, ուխտաւորներու փոքրիկ խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Նոյն օրը, ժամը 10:30-ին, Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան տասներկու սպաներ, առաջնորդութեամբ

Ռազմա-բժշկական Վարչության գնդերէց՝ Տ. Սամուէլ Քահանայ Սարգսեանի և Յովհաննէս Սարկաւազ Մարտիրոսեանի, այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ս. Աթոռոյս Գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ և ստացան անոր օրհնութիւնը: Սպաներուն կ'ընկերանային նաեւ Jerusalem Travel-ի ուխտաւոր հաւատացեալները:

Երկուշաբթի, 21 Մայիս.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Մոսկուայէն Տ. Յակոբ Քահանայ Սարոյեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 28 Մայիս.- Russian Mission-ի կողմէ իրենց եկեղեցւոյ տօնին առիթով կազմակերպուած հիւրասիրութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան և Աւագ Թարգման՝ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Հինգշաբթի, 31 Մայիս.- Երեկոյեան ժամը 4-ին, Երուսաղէմի Բնութեան Թանգարանի տնօրէն՝ Տիար Եւգենի Նամա ընկերակցութեամբ «Հայերը Երուսաղէմի մէջ» սեմինարի կազմակերպիչներու, այցելեցին Պատրիարքարան և հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: «Հայերը Երուսաղէմի մէջ» սեմինարի ընթացքին երկու շաբաթ շարունակ, եղան համերգներ, դասախօսութիւններ, հայկական սրբավայրերու այցելութիւններ:

Կիրակի, 3 Յունիս.- Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ գաւազանակիր՝ Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեանի և օգնական՝ Պօղոս Սարկաւազ Շահանեանի այցելեց Պատրիարքութեան Մայր Դիւան: Այցի ընթացքին Մայր Դիւանի տնօրէն՝ Պրն. Արշակ Բանուշեան և քարտուղար՝ Սերեոթա Սարկաւազ Պետրոսեան Պատրիարք Սրբազան Հօր ներկայացուցին կատարուած աշխատանքները՝ հին վկայագրերու, ֆերմաններու և հէօճէթներու նորոգման, մշակման և դասակարգման, ինչպէս նաեւ վնասուած հին վկայագրերու նորոգման և յարթեման ընթացքի մասին տեղեկութիւններ:

Երկուշաբթի, 4 Յունիս.- Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր գահակալութեան 5-րդ տարեդարձին առթիւ Պատրիարքական Դիւանի և գրասենեակներու բոլոր աշխատակիցները Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ այցելեցին Պատրիարք Սրբազան Հօրը շնորհաւորելու և երկար արդիւնաշատ ու բեղմնաւոր օրեր մաղթելու:

Նոյն օրը, Երուսաղէմի Իտալական Ընդհանուր Հիւպատոսարանին կողմէ Ազգային օրուայ առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեան ընկերակցութեամբ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի և Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի:

Հինգշաբթի, 7 Յունիս.- Երեկոյեան ժամը 4:30-ին Clark Համալսարանի Թուրք պատմաբան Պրն. Թաներ Աքչամ այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Պրն. Աքչամ 1988-էն սկսեալ հետաքրքրուած է Հայոց Յեղասպանութեանն առնչուող հարցերով և այդ մասին պաշտպանած է իր գոյտորական թեզը:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 5-ին, Ամերիկայէն Քեյմպրիճի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տ. Վազգէն Քահանայ Գուգուեանի առաջնորդութեամբ ուխտաւորներ այցելեցին Պատրիարքարան և ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 11 Յունիս.- Առաւօտեան ժամը 11-ին, Հայաստանէն Արգաւանդի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տ. Գրիգոր Քահանայ Յովհաննիսեան ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Չորեքշաբթի, 27 Յունիս.- Անգլիական Ընդհանուր Հիւպատոսարանին կողմէ, Ազգային օրուայ առիթով կազմակերպուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեան ընկերակցութեամբ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի և Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի:

Ուրբաթ, 29 Յունիս.- Առաւօտեան ժամը 10-ին Պելճիքայի Ընդհանուր Հիւպատոս՝ Տի-

կին Դանիէլ Հեյվըն այցելեց Պատրիարքարան և հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը ժամը 11-ին, Պատրիարքարան այցելեց և Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Իսրայէլի մէջ Հայաստանի նորանշանակ Արտակարգ և Լիազօր դեսպան Պրն. Արմէն Սմբատեան:

Նոյն օրը Սուրբ Երկրի մէջ Վատիկանի գրասենեակի հաստատման 70-ամեակի և Հռոմի Պապի գահակալութեան 5-րդ տարեդարձին առիթով կազմակերպուած հիւրասիրութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան և Աւագ Թարգման՝ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

